



33. ԿՆԳԱՆԸ ՀԻՒԱՐԸ

Մին թաքավըերու ախճիգյ քյեփեն վախտը հորը քշտին ասում ա՝ տոնը կնեղյն ա տինում, թաքավըերը թա՝ չէ՛: Ախճիգյն ուրան ասածն ա ասում, թաքավըերը՝ ուրանը: Վերը, խոսկը կոխլ ըն կըցընում:

Ուրերին մին օր թաքավըերը յոր ա օնում ուրան էտ հուրիփարի ըխճըկանը տերտակ-սըլըլղրան տամ էտ քըղաքեն ամենաթամբալ, ամենաքյասիր տղեն: Էտ էլ էն ջուռա թամբալ ա ինում, վրեր կոխկեն տիրած հացն էլ նղանում ա յոր օնեւ մանջերը տրան վրեր կոխած օտում ին, կարում շար քյիշ տար, ուրան անա հըորցընուր:

Էտ ախճիգյը քյինամ ա չտ տղեն: Հենց ուրիթա օրը հացը շինում ա, շատ հեռու, զրադ տինում: Թամբալն ասում ա.—Խեձ տո, կնեղյը թա՝ հանե՛ ընդեղ, եր կաց եր կալ, կեր, թամբալն ըսկըսում ա էրկու շագավ, իրեք շագավ, կումուր-կումուր հենգյ-վեց շագավ շոռ կյալը սուվըրելը: Ետնան վրեր ըսկըսում ա շոռ կյալը, կընեղը իրեք վրեսկե յա հըրցվար անում, տամ տրան, թա՝ քյինա քըղաքումը էսհինչ մարթին կոշտը, իրեք վրեսկեն տո ուրան, իրեք խոսկ ա սուվըրցըննական: Էտ թամբալը տի յել անում ա: Թյինամ ա էտ մարթին կոշտը, իրեք վրեսկեն տամ, էտ մարթը իրեք խոսկ

ա ասում, թա մըտետ կըպահես: Մին խոսկն էն ա, վըեր ամեն
խոռուկու հըվատալ լըն, մինն էլ էն՝ վըեր ծիր տեղ քոն լըն ինիի,
էն մինն էլ թա՝ մարթ հիշքան նեղ տեղ ինգիի, հովսալա կանե,
կըմտածե, ետնան ընելիսն անե:

Էտ վախտը մին խոչա մարթ նուրբարել շոռ կլալիս ա ինում,
հենց տըրան էլ պըտառում ա: Տա դյօւղում ա, վըեր կնեզոյր
մուլտա նորան հաց լի տըլական, քիինամ ա տարեկան իրեք
վրեսկավ էտ խուզեն քըշտին նուրբըրոթուն անում: Խոչան նորան
քյարվանը եր կալած, միշտ քյինամ ար օրիշ տեղեր, էտ թամ-
բալն էլ նըհետը:

Մեհետ, քյարվանը տուս եկած վախտը, էրկան հըղե յըն քյի-
նամ, ծըրըվանում, թըյրալին քյինդիրավ կապում ըն, քցնում մին
ճիրավըեր, վըեր ճուր տուս օնե: Վըեր հըսնում ա ծըրըվըերեն
տակը, բուրդան մին զըեռ օշափ կյամ ա տուաշը, տրան խուաթ-
նում, հըրցըփորց անում, իրեք նոռն էլ տամ, թա կդարկես տո-
նըու: Ճուրը կլիսըյեր դրկելան ետն էլ քյըրվանեն մարթիրյը օգում
շին տրան տուս օնեն: Տա վերլը, տահանց խաթիրը քթենում ա,
տուս ըն օնում:

Տրանա ետը քյարվանը խիլլա հըղե յա քյինամ, մին ծնը
տեղ վըեր կյամ: Տա քյըրվանեն մարթուցն ասում ա.—Լավ տեղ
շըթ վըեր կյամ: Հորժիսն եշում լըն: Նորյը պիցըրանում ա սարեն
կըլիխը: Լոխ քոմափ ըն հընցընում, քշերեն կեսումը մին սել ա
կյամ, քյարվանը նան քյըրվանեն մարթուցը լոխնինին քշնում,
տանում:

Էտ թամբալը մենակ հըղե յա ինում, քյինամ հըսնում նորանց
քաղաքը: Օգում ա, թա քյինա տուն, տեսնում ա նուրանց տանը
տըեղը մին զըեռ պալատ պիցըրացած: Շինանշում լի: Ուգուզոյուն
ա ինում: Պիցըրանում ա ծառը, տեսնում նորան կնեզոյը նստած,
մին ջահիլ տղա յել կլիխը տիրած գյուրպյումը, քոն իլած, կնեզյն
էլ տրա կլիխը սըղըլելիս: Թուվանգյը թուշ ա օնում, թա յիրա անե
վըեր քցի, էն մարթին խոսկը մըենն ա ինգունմ, զոռավ նորան
հվաքում, պահում: Վըեր քյինամ ա տոն, կնեզոյը դաստին ճինան-
շունմ ա: էն ջահիլն էլ նուրան տղան ա ինում, վըեր արտեն մծացալ
ար:

Մին օր էտ կնեզոյը քյեփ ա սարքում, թաքավըերեն նան ու-
րան մարթուցը ծեն տամ: Ճենց նստած, թունդ ուտելիս-խմելիս
վախտը ախճիգյը հորը հըրցընում ա՝ «մեհենգյ տոէ՝ տեսնամ
կնեզյն ա տոն տինողը», թա՝ մարթը: Թաքավըերը կարում լի
էտ խոսկը տանե, քյինամ ա նորան կախ տամ, ըսպանում: